ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1832-Ա/2 «14» սեպտեմբերի 2023 թ.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ («ՖՐԱՆՍԵՐԵՆ») ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-րդ դասարանի «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի երրորդ օտար լեզվի առարկայական ծրագիրը («Ֆրանսերեն»)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

9/14/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402831169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2023 թվականի սեպտեմբերի 14-ի
N 1832-Ա/2 հրամանի

ԵՐՐՈՐԴ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՖՐԱՆՍԵՐԵՆ

7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

(շաբաթական 1,5-2 ժամ)

Նախաբան

Երրորդ օտար լեզվի չափորոշչի և ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել Հանրակրթության պետական նոր չափորոշչի (ՀՊՉ) և «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի չափորոշիչն ու ծրագրերը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակներն են՝ Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (ԼԻԵՇ) **A1** և **A2** մակադակներին համապատասխան հաղորդակցվելու հմտությունների զարգացումը, այլ մշակույթների ճանաչումը, սովորողների մտահորիզոնի ընդլայնումը, նրանց տրամաբանական, ստեղծագործական և քննադատական մտածողության զարգացումը:

Ուսուցման և ուսումնառության բովանդակության հիմքում ընկած են մի քանի կարևոր դրույթներ, մասնավորապես՝

1. օտար լեզուն առաջնայնորեն հաղորդակցության միջոց է,
2. օտար լեզուն ուսումնառության և ճանաչողական կարողությունների զարգացման միջոց է,
3. օտար լեզվով հաղորդակցումը աշխարհճանաչման, ինքնաճանաչման և այլ մշակույթների ճանաչման հիմնական միջոցն է:

Երրորդ օտար լեզվի ուսուցումը սկսվում է 5-րդ դասարանից նախաայբբենական շրջանով:

Նախաայբբենական շրջանը կառուցվում է բանավոր խոսքի հիման վրա: Բանավոր դասընթացը կարող է ուղեկցվել այբուբենի տառերի պատկերների ծանոթացմամբ:

Նախաայբբենական շրջանը կարող է ներառել բանավոր խոսքի ձևավորմանը նպաստող կարճ երկխոսություններ, բանաստեղծություններ, երգեր, խաղեր, պաստառներ, համապատասխան տեսալսողական միջոցներ և այլն:

Այս փուլի հիմնական նպատակը հետաքրքրությունների ձևավորելն է երրորդ օտար լեզվի ուսումնառության նկատմամբ: Այդ տարիքի սովորողներն արդեն ունեն որոշակի հաղորդակցական հմտություններ, որոնք թույլ են տալիս շփվել միմյանց հետ նոր օտար լեզվով: Բանավոր դասընթացին հաջորդում է հիմնական մասը: Ելնելով թեմատիկայի և այն ուսումնասիրելու համար անհրաժեշտ լեզվանյութի փոխկապվածությունից և փոխպայմանավորումից՝ թեմատիկ շրջանակն ընտրվել է հաշվի առնելով Լեզուների իմացության եվրոպական շրջանակի (ԼԻԵՇ) **A1** և **A2** մակարդակների համար նախատեսված թեմատիկան և Հանրակրթության պետական նոր չափորոշչով հիմնական դպրոցի կրթական աստիճանի համար սահմանված վերջնարդյունքները:

Սույն ծրագիրը նախատեսված է հանրակրթական դպրոցների կողմից ընտրված երրորդ օտար լեզվի (գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն) ուսուցման համար: Այլ լեզու ընտրելու դեպքում հիմք են հանդիսանում ծրագրում նշված թեմատիկան, նպատակներն ու վերջարդյունքները, որոնք կարող են տեղայնացվել՝ կիրառելով համապատասխան քերականություն և բառապաշար:

Վերջանարդյունքներին հասնելու համար ուսումնական նյութերի ընտրությունը թողնվում է ուսուցչին. դրանք կարող են լինել ինչպես գործող դասագրքերը, այնպես էլ **A1** և **A2** մակարդակներին համապատասխան այլ ձեռնարկները և առցանց տարբեր նյութեր:

Ծրագրում ներկայացված միջառարկայական կապեր բաժնում նշված տարբեր առարկաներից ուսուցիչը ընտրում է այն առարկան, որն առավելագույնս խաչվում է օրվա դասի թեմայի հետ:

Երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակները

Հիմնական դպրոցում երրորդ օտար լեզվի ուսուցման նպատակն է՝

1. ԼԻԵՇ-ի **A1, A2** մակարդակներին համապատասխան հաղորդակցական կարողությունների զարգացումը,

2. կրթական տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիքի (բառապաշար, քերականություն, ուղղագրություն, արտասանություն) զարգացումը,

3. սովորողների մոտ այլ լեզուների և մշակույթների հանդեպ հետաքրքրության սերմանումը:

Երրորդ օտար լեզվի ուսուցման վերջնարդյունքները.

Հաղորդակցություն

1. Լսել և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով հնչող պարզ, հստակ և դանդաղ խոսքը:
2. Կարդալ և հասկանալ իրեն ծանոթ առօրյա թեմաներով պարզ տեքստի հաղորդած տեղեկությունները և հիմնական բովանդակությունը:
3. Համառոտ նկարագրել իրեն, իր շրջապատը, իր առօրյան:
4. Շարադրել պարզ համառոտ տեքստ իր, իր շրջապատի, առօրյայի մասին:
5. Սկսել երկխոսություն իրեն ծանոթ թեմայով՝ արձագանքելով իրեն ուղղված հարցերին: Արտահայտել համաձայնություն կամ անհամաձայնություն՝ տալով պարզ պատասխաններ կամ խնդրելով հստակեցումներ:
6. Կիրառել տվյալ մակարդակին, թեմային և հաղորդակցական իրադրությանը համապատասխան լեզվական գիտելիք (քերականություն, բառապաշար):

1. Մշակութային վերջնարդյունքներ

Արժեքներ

1. Ճանաչել համաշխարհային մշակութային բազմազանությունը, ժառանգությունը և արժեքները:

2. Գիտակցել բազմալեզու կրթության դերը՝ որպես գլոբալ աշխատաշուկայում հաջողության գրավական:

3. Կարևորել համակեցության նախապայման հանդիսացող արժեքները (ընկերասիրություն, հարգանք, մարդու իրավունքներ, ժողովրդավարություն և այլն):

Վերաբերմունք

1. Ցուցաբերել հարգալից, հոգատար և պատասխանատու վերաբերմունք այլ ազգությունների, նրանց մշակույթների նկատմամբ:
2. Ցուցաբերել հետաքրքրություն այլ երկրների և մշակույթների ճանաչման նկատմամբ:

Նորմեր, կանոններ

1. Իմանալ լեզվակիր երկրի մշակութային առանձնահատկությունները:
2. Ճանաչել մշակույթով/ժամանակով պայմանավորված կենցաղի մի շարք նորմեր (հագուստ, սնունդ և այլն):
3. Ճանաչել ուսումնասիրվող լեզվով հաղորդակցության նորմերը և պահպանել դրանք այդ լեզվով հաղորդակցվելիս:

Հետաքրքրություններ/Նախասիրություններ

1. Դրսևորել հետաքրքրություն ուսումասիրվող լեզվի երկրների մշակութային արժեքների հանդեպ:
2. Ճանաչել ուսումնասիրվող լեզվի երկրի հասակակցի հետաքրքրություններն ու նախասիրությունները:

2. Քննական և ստեղծարար միտք

Միտք

1. Ձևակերպել կապակցված միտք արտահայտող պարզ խոսք:
2. Բերել պարզ հիմնավորումներ:
3. Ընտրել, ստեղծել և կիրառել մտքերն արդյունավետ կերպով ներկայացնող տեսողական միջոցներ:

Տրամաբանական կապեր

1. Դասավորել մտքերը միմյանց հետ փոխկապակցվածությամբ (ընդհանուր/մասնավոր, պատճառ/հետևանք)՝ ճիշտ լեզվական միջոցների կիրառմամբ:

Վերլուծություն

1. Դասակարգել թեմայի շուրջ ստացված տեղեկությունները:
2. Նշել ազգային և համաշխարհային մշակույթների նմանություններն ու տարբերությունները:

Առաջընթաց

1. Արձագանքել ուսուցչի պարզ հրահանգներին:
2. Բերել պարզ հիմնավորումներ, մտքեր և մեկնաբանել դրանք:

1. Ոճ և նորաձևություն
2. Երաժշտությունը՝ համամարդկային լեզու
3. Մեր մոլորակը
4. Օլիմպիական և պարալիմպիկ խաղեր
5. Ժամանակի մեքենա

Թեմա 1	
Ոճ և նորաձևություն	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** ճաշակ, ոճ և նորաձևություն հասկացությունները: 2. **Ներմուծել և ամրապնդել** ոճին և նորաձևությանն առնչվող բառապաշարը: 3. **Ներմուծել և ամրապնդել** թեմային համապատասխան քերականական նյութը: 4. **Ձևավորել գնահատողական վերաբերմունք նորաձևության նկատմամբ:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</u> 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. համապատասխան քերականական նյութը, 3. տեղեկություններ նորաձևության մեջ ճանաչված դիզայներների մասին:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ «Ոճ և նորաձևություն» թեմայով ձայնագրությունների հիմնական բովանդակությունը, 2. կարդալ և հասկանալ «Ոճ և նորաձևություն» թեմայով տեքստերի հիմնական բովանդակությունը, 3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ իր նախընտրած ոճի մասին, 4. տալ հարցեր նորաձևության, հագուստի ոճերի և իր նախընտրած

	ոճի մասին և պատասխանել իրեն ուղղված հարցերին, 5. կազմել իր նախընտրած ոճը նկարագրող պարզ տեքստ , **6. դրսևորել նորաձևության նկատմամբ վերաբերմունք՝ կարևորելով ինքնարտահայտումը անհատական ոճի միջոցով:**

Բովանդակություն
1. Հագուստի ոճեր 2. Իմ ոճը
Առաջարկվող գործունեության ձևեր
1. Դերախաղ 2. Սահիկաշար՝ «Ոճեր թելադրողներր» 3. Նախագիծ՝ «Հագուստի ոճեր» (ցուցադրություն) 4. Տեսահոլովակի դիտում
Միջառարկայական կապեր
Հայոց լեզու- Խոսել ոճային առանձահատկությունների մասին: **Կերպարվեստ** – Տարբերել ոճերը և պատկերել իր նախընտրած ոճը: **Թվային գրագիտություն**- Պատրաստել կարճ տեսահոլովակ՝ ճանաչված ոճաբանների մասին:

Թեմա 2
Երաժշտությունը՝ համամարդկային լեզու
Հիմնական նպատակը
1. **Ներմուծել** երաժշտության ոճերին և գործիքներին առնչվող բառապաշարը և պարզ արտահայտությունները:

2. **Ներմուծել և ամրապնդել** թեմային համապատասխան քերականական նյութը:
3. **Արժևորել երաժշտությունը որպես միջմշակութային, միջանձնային հաղորդակցության և ինքնաարտահայտման միջոց:**

Վերջնարդյունքներ

Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝	***Լեզվական կարողություններ: Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝***
1. թեմային առնչվող բառապաշարը, 2. համապատասխան քերականական նյութը, 3. տեղեկություններ հայ և համաշխարհային անվանի երաժիշտների մասին, 4. երաժշտության տարբեր ոճերը:	1. լսել և հասկանալ երաժշտություն թեմայով հնչող պարզ խոսքը, 2. կարդալ և հասկանալ երաժշտության (ոճերի, գործիքների և այլն) և անվանի երաժիշտների մասին պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը, 3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ՝ երաժշտության ոճերի և անվանի կոմպոզիտորների/երաժիշտների մասին, 4. գրել պարզ տեղեկատվական տեքստ՝ ներկայացնելով երաժշտության իր նախընտրած ոճը, , 5. քննարկել երաժշտության դերը մարդու կյանքում թեման՝ հիմնավորելով իր կարծիքը, **6. դրսևորել հարգալից վերաբերմունք երաժշտական տարբեր ճաշակների նկատմամբ:**

Բովանդակություն

1. Երաժշտական տարբեր ոճեր
2. Երաժշտության մեծերը (համաշխարհային և հայ)
3. Երաժշտությունն իմ կյանքում

Առաջարկվող գործունեության ձևեր

1. Դերախաղ
2. Սահիկաշար՝ «Երաժշտության ոճեր» (խմբային աշխատանք)
3. Պաստառ «Երաժշտության մեծերը»
4. Տեսահոլովակի դիտում
5. Նախագիծ՝ «Փոփ երաժշտություն»

Միջառարկայական կապեր

Գրականություն- Ընթերցել որևէ հայտնի երգահանի հուշագրությունները կամ կենսագրությունը:
Արվեստ/Երգ- Ունկնդրել և արձագանքել երաժշտական ստեղծագործությանը՝ արտահայտելով իր վերապրած հույզերը և ներկայացնելով տպավորությունները:
Թվային գրագիտություն- Պատրաստել ձայնուղի՝ երաժշտական միքս տարբեր երաժշտական ստեղծագործություններից:
Պատմություն – Քննարկել հայկական երաժշտական մշակութային ժառանգությունը (Կոմիտաս. Ա.Խաչատուրյան):

Թեմա 3

Մեր մոլորակը

Հիմնական նպատակը

1. **Ներմուծել** բնության, բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվության գաղափարը:
2. **Ներմուծել** և ամրապնդել մոլորակի բնության և շրջակա միջավայրի պաշտպանության առնչվող բառապաշարը:
3. **Ներմուծել** և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը:
4. **Ձևավորել պատասխանատու վարքագիծ և հոգատար վերաբերմունք Երկիր մոլորակի նկատմամբ:**

Վերջնարդյունքներ

<u>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա</u>՝	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝***

1. թեմային առնչվող բառապաշարը, 2. համապատասխան քերականական նյութը, 3. մոլորակին վերաբերող գլոբալ (նաև էկոլոգիական) խնդիրների մասին:	1. լսել և հասկանալ մեր մոլորակի մասին պատմող տեքստի հիմնական իմաստը, 2. կարդալ և հասկանալ մեր մոլորակին մասին պարզ տեքստերի հիմնական բովանդակությունը, 3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ՝ բնապահպանական որևէ խնդրի մասին՝ հիմնավորելով դրա կարևորությունը և արտահայտելով իր կարծիքը, 4. գրել պարզ, կարճ շարադրություն աշխարհի/բնության մասին, 5. քննարկել իրեն ծանոթ կամ իր համայնքին վերաբերող բնապահպանական հիմնախնդիրները՝ հիմնավորելով իր կարծիքը և առաջարկելով լուծումներ, **6. կարևորել Երկիր մոլորակի նկատմամբ պատասխանատու վարքը իր առօրյա կյանքում:**
Բովանդակություն	
1. Աշխարհի հրաշալիքները (նաև բնություն) 2. Ես պատասխանատու եմ մոլորակի համար	
Առաջարկվող գործունեության ձևեր	
1. Դերախաղ 2. Պաստառ՝ «Աշխարհի հրաշալիքները» 3. Սահիկաշար՝ «SOS. Երկիր/Երկրի բնապահպանական հիմնախնդիրները» (խմբային աշխատանք) 4. Տեսահոլովակի դիտում, քննարկում 5. Նախագիծ՝ որևէ բնապահպանական հիմնախնդրի շուրջ:	
Միջառարկայական կապեր	
Հայոց լեզու- Կազմել տեքստ «Իմ մաքուր մոլորակը» թեմայով:	

Պատմություն- Ներկայացնել Աշխարհի հրաշալիքների ստեղծման պատմությունը: **Թվային գրագիտություն**- Որոնել տեղեկություններ արդի բնապահպանական խնդիրների մասին: **Աշխարհագրություն**- Քարտեզի վրա ցույց տալ առավել աղտոտված երկրներն ու օվկիանոսները: **Կենսաբանություն-** Բացատրել բնության աղտոտման ազդեցությունը կենսահամակարգերի վրա: **Տեխնոլոգիա** – Ճանաչել թափոնների վերօգտագործման և վերամշակման կարևորությունը, պատրաստել կենցաղային իր թափոններից:

Թեմա 4	
Օլիմպիական և պարալիմպիկ խաղեր	
Հիմնական նպատակը	
1. **Ներմուծել** սպորտը՝ որպես առողջ ապրելակերպի, համամարդկային արժեքի և հավասար հնարավորությունների իրացման միջոց գաղափարը: 2. **Ներմուծել և ամրապնդել** սպորտին և մարզաձևերին առնչվող բառապաշարը և պարզ արտահայտությունները: 3. **Ներմուծել և ամրապնդել** թեմային համապատասխան քերականական նյութը: 4. **Ձևավորել վերաբերմունք առողջ ապրելակերպի, խտրականության բացառման, ապրումակցման և մարդկանց հավասար հնարավորությունների վերաբերյալ:**	
Վերջնարդյունքներ	
<u>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</u> 1. թեմային առնչվող բառապաշարը, 2. համապատասխան քերականական նյութը, 3. հայ և ուսումնասիրվող երկրի օլիմպիական և պարալիմպիկ չեմպիոններին:	***<u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝*** 1. լսել և հասկանալ սպորտի վերաբերյալ տեքստի հիմնական իմաստը, 2. կարդալ և հասկանալ սպորտի, մարզաձևերի, մարզիկների, մարզական իրադարձությունների մասին պատմող պարզ տեքստերի

	հիմնական բովանդակությունը, 3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ օլիմպիական և պարալիմպիկ խաղերի կարևորության մասին՝ արտահայտելով իր կարծիքը, 4. գրել պարզ շարադրություն՝ որևէ մարզաձևի կամ մարզիկի վերաբերյալ, 5. լրացնել մարզախաղին մասնակցության հայտի ձևաթուղթը՝ նշելով փաստացի տվյալներ, 6. քննարկել մարդու կյանքում սպորտի կարևորությունը՝ հիմնավորելով իր կարծիքը, **7. կարևորել առողջ ապրելակերպի, խտրականության բացառման, հավասար հնարավորությունների և ապրումակցման անհրաժեշտությունը:**

Բովանդակություն

1. Մեր չեմպիոնները
2. Սպորտ բոլորի համար. պարալիմպիկ խաղեր
3. Սպորտն իմ կյանքում

Առաջարկվող գործունեության ձևեր

1. Դերախաղ
2. Սահիկաշար՝ «Հայ օլիմպիական մարզիկները» (խմբային աշխատանք)
3. Տեսահոլովակի դիտում, քննարկում
4. Նախագիծ

Միջառարկայական կապեր

Հայոց լեզու- Ներկայացնել օլիմպիական որևէ մարզաձև/մարզիկի**:**
Ֆիզկուլտուրա – Ճանաչել հայ օլիմպիական չեմպիոններին:
Պատմություն- Ներկայացնել Օլիմպիական պատմությունը հին և նոր ժամանակներում**:**
Կենսաբանություն- Ներկայացնել հենաշարժողական համակարգի կառուցվածքը և սպորտի ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա:

<table>
<tr><th colspan="2">Թեմա 5</th></tr>
<tr><td colspan="2">Ժամանակի մեքենա</td></tr>
<tr><th colspan="2">Հիմնական նպատակ</th></tr>
<tr><td colspan="2">1. Ներմուծել ժամանակի մեջ քաղաքակրթական փոփոխությունների գաղափարը:
2. Ներմուծել և ամրապնդել մարդկության պատմության մեջ կարևորագույն իրադարձություններին առնչվող բառապաշար և պարզ արտահայտություններ:
3. Ներմուծել և ամրապնդել թեմային համապատասխան քերականական նյութը:
4. Գիտակցել ժամանակի մեջ և ժամանակի հետ քաղաքակրթական փոփոխության/զարգացման կարևորությունը:</td></tr>
<tr><th colspan="2">Վերջնարդյունքներ</th></tr>
<tr><td><u>Գիտելիք: Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝</u>

1. թեմային առնչվող բառապաշարը,
2. համապատասխան քերականական նյութը,
3. մարդկության պատմության մեջ կարևորագույն նշանակություն ունեցող ներկայի և անցյալի իրադարձությունները:</td><td><u>Լեզվական կարողություններ:</u> Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝

1. լսել և հասկանալ կարևորագույն իրադարձությունների մասին պատմող տեքստերի հիմնական բովանդակությունը,
2. կարդալ և հասկանալ կարևորագույն իրադարձությունների մասին պատմող տեքստերի հիմնական բովանդակությունը,
3. ներկայացնել նախապես պատրաստված ելույթ որևէ հիշարժան տարեթվի կամ իրադարձության մասին,
4. գրել շարադրություն՝ նկարագրելով իր ուղևորությունը դեպի անցյա,
5. քննարկել մարդկության պատմության մեջ որևէ հիշարժան տարեթվի կամ իրադարձության կարևորությունը՝ հիմնավորելով իր կարծիքը,
6. Կարևորել մարդկության</td></tr>
</table>

	պատմության մեջ հիշարժան տարեթվերը և իրադարձությունները:
Բովանդակություն	
1. Հիշարժան տարեթվեր և իրադարձություններ 2. Գյուտեր/հայտնագործություններ	
Առաջարկվող գործունեության ձևեր	
1. Դերախաղ 2. Սահիկաշար՝ «Ժամանակի մեքենա» 3. Պաստառ՝ «Անցյալն ու ներկան» 4. Տեսահոլովակի դիտում, քննարկում Նախագիծ (համեմատում են անցյալի իրողությունները ներկայի հետ):	
Միջառարկայական կապեր	
Գրականություն- Քննարկել գրողի ստեղծագործական ժամանակաշրջանը: **Պատմություն**- Ներկայացնել մարդկության պատմության հիշարժան իրադարձություններն ու տարեթվերը: **Աշխարհագրություն**- Քննարկել Երկիր մոլորակի գեոկառուցվածքն անցյալում և ապագայում: **Թվային գրագիտություն**- պատրաստել անցյալի կենսակերպը պատմող տեսանյութ:	

Դասարան	**Թեմաներ**	**Քերականություն**
7-րդ դասարան	Ոճ և նորաձևություն Երաժշտությունը համամարդկային լեզու Մեր մոլորակը Օլիմպիական և պարալիմպիկ խաղեր Ժամանակի մեքենա	Révision de grammaire apprise pour le niveau A2 Les pronoms adverbiaux EN et Y Les pronoms démonstartifs Les pronoms relatifs simples (qui, que, où, dont, quoi) Le participe présent(lisant, partant, faisant) Le gérondif (en lisant, en mangeant, en nous promenant) Le participe passé

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, Երևան, 2021թ.
2. Հանրակրթական ընդհանուր ծրագրի «ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ» բնագավառի 2-12-րդ դասարանների չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2021թ.
3. Common European Framework of Reference for Languages: Learning, Teaching, Assessment, Cambridge University Press, Modern Languages Division, Council of Europe, Strasbourg, 2001. Available at https://rm.coe.int/1680459f97